ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
հեռ093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am, meghradzor@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 194

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով համայնքի բնակչի դիմումը՝ *ո ր ո շ ու մ ե մ.*

1. Մեղրաձոր համայնքի <<այլ նպաստներ>> 4729 հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել 40 000 / քառասուն հազար/ ՀՀ դրամ Մեղրաձոր համայնքի սոցիալապես անապահով ընտանիքին՝ համաձայն կից ձևաչափի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*2018 թ. օգոստոսի 31-ին*
*գ.Մեղրաձոր*

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի ղեկավարի
2018 թվականի օգոստոսի 31-ի N194 որոշման
Համայնքի ղեկավար Կ. Հովհաննիսյան

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

| հ/հ | Անուն, ազգանուն | հասցեն | գումարը |
|---|---|---|---|
| 1 | Զոհրաբյան Իշխան | Մեղրաձոր համայնք, գյուղ Աղավնաձոր | 40000/քառասուն հազար/ ՀՀ դրամ |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 195

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով <<Աբաջուր սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը՝ ո ր ո շ ու մ ե մ.

1.<<Աբաջուր>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը թույլատրել ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի Հանքավան գյուղի 2-րդ փողոց 28 հասցեի հողամասում /ծածկագիր 07-039-0102-0027/ կառուցվող ՀԷԿ համար նախատեսված շենք 6,40 մ x20,60մ, պատվար 25.0մX23.60 մ և ճնշումային ջրատար 2100մ:

2.Շինարարական աշխատանքները իրականացնել 24 /քսանչորս/ ամսվա ընթացքում:

3. Շինարարության թույլտվության համար համայնքի բյուջե վճարել 45 000 /քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*2018 թ օգոստոսի 31-ին*
*գ.Մեղրաձոր*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 196

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով՝ *ո ր ո շ ու մ ե մ.*

1. << ԷՅ ԸՆԴ ԷՄ ՌԵՅՐ>> ՍՊԸ- ին թույլատրել ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի Արտավազ գյուղում գտնվող <<ԷՅ ԸՆԴ ԷՄ ՌԵՅՐ>> ՍՊԸ-ին պատկանող տարածքում կառուցել շշալցման գործարանի խմելու ջրի համակարգում N39 աղբյուրի N 5 և N6 ակունքներին մոտեցող ճանապարհ:

2. Շինարարության թույլտվության համար համայնքի բյուջե վճարել 15000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*2018 թօգոստոսի 31-ին*
*գ.Մեղրաձոր*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 197

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով համայնքի բնակչի դիմումը՝ *ո ր ո շ ու մ  ե մ.*

1. Մեղրաձոր համայնքի <<այլ նպաստներ>> 4729 հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել 40 000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ Մեղրաձոր համայնքի սոցիալապես անապահով ընտանիքին՝ համաձայն կից ձևաչափի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ե. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*2018 թ. սեպտեմբերի 03-ին*
*գ.Մեղրաձոր*

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի ղեկավարի
2018 թվականի սեպտեմբերի 03-ի N197 որոշման
Համայնքի ղեկավար՝ Ա. Հովհաննիսյան

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

| Հ/Հ | Անուն,հայրանուն, ազգանուն | հասցեն | գումարը |
|---|---|---|---|
| 1 | Գայյա Համլետի Ստեփանյան | Մեղրաձոր համայնք, գյուղ Մեղրաձոր,3փ. 68/2շ, 14 բն. | 40000/քառասուն հազար/ ՀՀ դրամ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 198

## ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N89-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Բյուջետային համակարգի մասին >> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Մեղրաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի N89-Ն որոշումն՝ *ո ր ո շ ու մ ե մ.*

Մեղրաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի <<Մեղրաձոր համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N89-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ վերաբաշխումներ

Վարչական և ֆոնդային բյուջեի ծախսային մաս

1. Բաժին 01 խումբ 1 դաս 1 Տող 1111000 աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ 4111 սինթետիկ հաշիվ <<64 815 429>> թիվը փոխարինել <<64 574 429>> թվով:

1) տող 1124100՝ մասնագիտական ծառայություններ 4241 սինթետիկ սինթետիկ հաշիվ <<150 000>> թիվը փոխարինել <<230 000>> թվով:

2.Բաժին 8 խումբ 1 դաս1 տող 1123800՝ ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 սինթետիկ հաշիվ <<3 880 000>> թիվը փոխարինել <<4 041 000>> թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*2018թ. սեպտեմբերի 04-ին*
*գ.Մեղրաձոր*